

ԿՈՒՅՐ ՀՈՐ ՈՒ ԻՐ ՏԱՌԱՊՅԱԼ ՈՐԴԻՆՆԵՐԻ
ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԹԵՄԱՆ ԵՎ ՔՅՈՐՕՂԻՆ

ՍՏՆՓԱՆ ԱՅՅԱՆ (Փարիզ)

Հեթիթական արձանագրությունների (Ք. ծ. ա. 16-րդ դար) և հայկական բանահյուսական երկերի համեմատությունը մեզ թույլ է տալիս հայտնաբերել կուլյրի որդու առասպելական թեմայի մի նոր տարրերակ:

Իլլույանկա վիշապի առասպելի երկրորդ տարբերակի պահպանված մասը հաղորդում է՝ թե ինչպես այս վիշապը հաղթում է փոթորկի աստծուն՝ հանելով վերջինիս աչքերն ու սիրտը Այնուհետև այդ աստվածն ամուսնանում է մի հասարակ մահկանացուի հետ: Ամուսնությունից ծնված որդին կնուսթյան է առնում Իլլույանկա վիշապի դստերը: Օգտվելով առիթից՝ փոթորկի աստծու որդին մտնում է Իլլույանկայի տունը և հետ է վերցնում իր հոր աչքերն ու սիրտը: Փոթորկի աստվածը, իր մարմինը վերականգնելով, զորանում և հաղթում է: Վերջին վայրկյանին որդին միջամտում է՝ խնդրելով, որ հայրը չխնայի իրեն ու շհամարի իր ազգականը: Փոթորկի աստվածը սպանում է որդուն և վիշապին:

1902 թվականին հրատարակված հայկական մի ավանդազրույց² տեղեկացնում է ծերացած Արամ թագավորի հանկարծակի կուրացման մասին: Մի ծերունի արքային վստահում է դեղամիջոցի գաղտնիք, որը կբուժի նրա կուրությունը և կերիտասարդացնի նրան: Սակայն այդ դեղամիջոցը գտնվում է Շամիրամ թագուհու մոտ, որը Արամի հակառակորդն է³:

Արամի որդին՝ Արան, իմանալով, որ այդ դեղը պահվում է թագուհու ննջասենյակում, մեկնում է՝ այն ձեռք բերելու: Մի քանի հերոսական սխրագործություններ կատարելուց հետո Արան հասնում է Վան քաղաքը և գաղտնաբար մուտք գործում Շամիրամի ննջարանը: Հրապուրվելով քնած թագուհու արտակարգ գեղեցկությամբ՝ Արան իր մատանին փոխում է Շամիրամի մատանու հետ՝ թողնելով իր այցելության ապացույցը: Վերադառնալով հայրենիք՝ Արան դեղը տալիս է հորը, որից հետո վերջինս վերագտնում է իր տեսողությունն ու երիտասարդանում:

Բայց Շամիրամը, տեսնելով Արայի մատանին, մեծ բանակով գալիս է Արամի քաղաքի վրա, սպառնում արյունահեղ ճակատամարտով: Արան ստիպված համաձայնում է մեկնել թագուհու հետ՝ փրկելով Հայաստանը կործանումից: Երեք տարի անց հայրը պահանջում է, որ Արան վերադառնա հայրենիք: Անսալով հորը՝ Արան փախստական է լինում դեպի Հայաստան, ուր և ամուսնանում է: Սակայն Շամիրամի դեմ մղած վերջին ճակատամարտում Արան սպանվում է:

Հայ ժողովրդական մեկ այլ հեքիաթում⁴ կուլյրի որդին ետ է խլում հոր գողացված աչքերը և վերականգնում նրա առողջությունը:

Իսկ 1884-ին գրի առնված մի հայկական հեքիաթում⁵ կուլյրի որդուն հաջողվում է երիտասարդացնել իր հորը:

Թիվ 1 աղյուսակում զուգահեռներ են անցկացվում հեթիթական և հայկական տարրերակ-

¹ Գրություն տառադարձությունը տե՛ս Emmanuel Laroche, «Teyxtes mythologiques hittites en transcription», ՄաՏ Ա, Mythologie Anatolienne, Revue Hittite et Asiatique, 1965, էջ 89—110, Քարգամ, տե՛ս Bert de Vries, The stily of hittite epic and mythology, Brandeis University, Ph. P., 1967, էջ 16 և հետ.:

² «Արա Գեղեցիկ», «Ազգագրական հանդես», թ. 9, էջ 144—159, Պատված է Ս. Սաֆարյանի կողմից, որը լսել է Մուշում: Գրառել և հրատարակել է Ծ. Լայլայանը:

³ Արամի և իր որդի Արա Գեղեցիկի մասին տե՛ս նաև Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց (1, 12):

⁴ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 4, Եր., 1963, էջ 46 և հետ.։ Տե՛ս նաև նույն գրքի էջ 78-ի հեքիաթը, ուր որդին հետ է վերցնում հոր աչքերը:

⁵ Կ. Մովսեսյան, Մանանայ, Կ. Պոլիս, 1884: Հիշենք նաև հետևյալ հեքիաթները, ուր կա կուլյրի որդիների թեման («Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. 1, Եր., 1959, էջ 49 և հ. 12, Եր., 1984, էջ 280):

նորի միջև: Ընդգծենք նաև տարբերությունները, որ վերաբերում են երկու երկերում հերոսների մահվան հանգամանքներին: Վերջում մենք կփորձենք բացատրել փոթորիկի աստժու որդու դրժվարմբունիի հակադեցությունը:

Առասպելաբանական այս նոր տարբերակում կույրի որդին ձևոք է բերում անհրաժեշտ դեղը կամ հենց հոր աչքերը, որոնք գտնվում են հոր թշնամու մոտ, և նրան հաջողվում է բուժել հորը: Հիշեցնենք նաև, որ հեթիթական սեպագիր արձանագրությունները ուշ են վերականգնվել, հայկական ավանդազրույցների հրատարակումից հետո: Բացի այդ, հույն պատմաբան Հերոդոտոսը Ք. ծ. ա. 5-րդ դարում Կենտրոնական Անատոլիայում ճամփորդած ժամանակ ուշիւ շի հայտնում հեթիթների կայսրության մասին:

Աղյուսակ 1-ին

Հեթիթական արձանագրություններ (Ք. ծ. ա. 16-րդ դար) —	Հայկական ավանդազրույցներ (մ. թ. 19—20-րդ դարեր)
1. Կույրի որդին ամուսնանում է հոր թշնամու դստեր հետ:	1. Կույրի որդին ամուսնանում է հոր թըշնամի Ծամիրամի հետ:
2. Կույրի որդին մտնում է հոր թշնամու մոտ, որպեսզի վերցնի հոր սիրտն ու աչքերը: Նրան հաջողվում է վերականգնել հոր մարմինը:	2. Կույրի որդին գաղտնի մտնում է հոր թըշնամու պալատը, որպեսզի վերցնի կամ դեղը, կամ աչքերը (ըստ տարբերակների): Նրան հաջողվում է վերականգնել հոր մարմինը:
3. Կույրի որդին ունի հակասություններ Մի շրջանում հյու-հնազանդ է հոր թշնամու հանդեպ, մյուս շրջանում՝ խրոխտ:	3. Կույրի որդին մի շրջանում հնազանդ ու հանդուժեժող է հոր թշնամու հանդեպ, մըյուս շրջանում՝ խրոխտ:
4. Կույրի որդին մահանում է մարտում:	4. Կույրի որդին մահանում է պայքարում:

Վիշապի երկի և հայկական ավանդազրույցների համեմատությունը երևան է բերում առասպելական թեմայի մի նոր տարբերակ: Նույն թեմայի մեկ այլ տարբերակի հայտնաբերման համար պարտական ենք Հայկ Պերպերյանին⁶ և Ժորժ Դյումեզիլին⁷: Նրանք համեմատել են Հերոդոտոսի երկը սկյութների մասին, Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու: առասպելները Տիրանի և Արշակի մասին, Ամիրանի վրացական հեքիաթներն ու թյուրքական «Քյորոլլի» էպոսը: Հերոդոտոսը (Գիրք շորորդ) նկարագրում է սկյութների՝ 28 տարի տեւած արշավանքից վերադարձը իրենց երկիր: Սկյութներին դիմավորում էին իրենց ստրուկների որդիները: Սկյութների երկարատև բացակայության ժամանակ նրանց անհամբեր կանաչը, սեռական հարաբերությունների մեջ մտնելով ստրուկների հետ, ունեցել էին որդիներ, որոնցից կազմված բանակն էլ հենց դիմավորում էր սկյութներին: Հերոդոտոսը հաղորդում է հետևյալը. «Իրենց բոլոր ստրուկներին սկյութները կուրացնում են իրենց խմած կաթի պատճառով, որն ստանում էին հետևյալ կերպ: Վերցնում էին շվիի նմանվող ոսկորի փողակներ և դրանք մտցնելով զամբիկների հեշտոցը, բերանով օդ էին փչում դրանց մեջ. ընդ որում, մեկը փչում է, մյուսը՝ կթում: Ասում են, թե իրևեր կթում են այսպես հետևյալ պատճառով: Երբ զամբիկի երակը լցվում է օդով, նրա ստիչքը կախվում է: Կթելուց հետո կաթը լցնում են փայտի խոր անոթների մեջ, այնուհետև, կույր ստրուկներին կանգնեցնելով անոթների շուրջ, նրանց հրամայում են թափահարելով խառնել կաթը, որից հետո (սկյութները) հավաքում են երեսին կանգնած կաթը, որը համարում են առավել հարգի, իսկ տակին մնացած կաթը նրանք պակաս են գնահատում: Ահա այս պատճառով սկյութները կուրացնում էին իրենց ձեռքն ընկած բոլոր գերիներին, քանզի նրանք հողագործներ չէին, այլ վաշկատուներ⁸: Ահա այս կույր ստրուկներից ծնված որդիները դիմադրում էին իրենց երկիր վերադարձող սկյութներին: Բազմիցս մարտեր են մղվում, և սկյութները շն կարողանում առավելութան հասնել: Այնժամ նրանցից մեկն ասում է. «Այդ ի՞նչ ենք անում, սկյութ մարտիկներ: Մենք կովում ենք մեր սեփական ստրուկների դեմ: Եթե նրանք մեզ սպանեն, մենք կնվազենք, իսկ եթե մենք նրանց սպանենք, հետագայում պակաս թվով ստրուկներ կունենանք: Ուստի այժմ, իմ կարծիքով, պետք է մի կողմ դնել նիզակն ու

⁶ Տե՛ս Հայկ Պերպերեան, Արշակ Բ և Քէօրօլլու, Փարիզ, 1939:

⁷ Տե՛ս Georges Dumézil, Les légendes de «Fils d'aveugles» au Caucase et autour du Caucase, Revue de l' Histoire des Religions. 1938, էջ 50—74: Տե՛ս նաև Գույնի Romans de Scythie et d' Alentour. Փարիզ, 1978, էջ 307—326:

⁸ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Թարգմանությունը Սիմոն Կրկյաշաղյանի, Երևան, 1986, էջ 222—223:

աղեղը և ամեն մեկս, վերցնելով մեր ձիու մտրակը, շարժվենք նրանց վրա: Քանզի նրանց, մեզ զինված տեսնելով, իրենց համարում են մեզ հավասար և մեզ հավասարների ծնունդ: Բայց երբ արդեն մեզ տեսնեն զենքի փոխարեն մտրակ բռնած, ապա կհասկանան, որ իրենք մեր ստրուկներն են և այդ գիտակցելով այլևս չեն դիմադրի: Լսելով այս խորհուրդը՝ սկյուֆներն այդպես էլ վարվում են: Մինչդեռ ստրուկները, ահաբեկվելով կատարվածից, մոռացան կռվելը և փախան:

Անհավանականություններով լի է այս տարբերակը, որտեղ կույրերի որդիները ունեն բավական թիվ, որպեսզի կազմեն զորավոր բանակ: Սակայն նրանց ապստամբությունը շատ արագ ճեշվում է, երբ ստրուկները մտրակներ են տեսնում: Տերերի այդ խորամանկությունը կույրերի որդիների մեջ արթնացնում է ստրուկի քնազդը, և երևում է նրանց իսկական էությունը:

Հայոց Տիրան թագավորի և իր որդի Արշակի տիրակալության շրջանի դեպքերը, ինչպես գիտենք, հաղորդում են Փավստոս ու Խորենացին:

Փավստոս Թուզանդը (3, 20) գրում է, որ մինչ կատարյալ խաղաղություն էր տիրում Հայոց Տիրան և Պարսից ներսեհ թագավորների միջև, մի շնչին բանի պատճառով խռովություն է ծագում Տիրանի սենեկապետ Փիսակի ձեռքով: Սա դեսպան էր գնացել Վարազ Շապուհի մոտ, որին Պարսից արքան սահմանապահ էր թողել Ատրպատականում: Դեսպանացնացություն ծամանակ Փիսակը Վարազին հայտնում է, որ Տիրանը մի հոյակապ նժույգ ունի: Վարազը այդ ձին պահանջում է Տիրանից, բայց վերջինս մեկ այլ ձի է ուղարկում Փիսակի ձեռքով: Ատրպատականի իշխանին բացահայտվում է իսկությունը: Հայոց թագավորի դեմ գրգռված Վարազը անմիջապես ամբաստանության թուղթ է գրում ներսեհ թագավորին: Սա էլ կարգադրում է Ատրպատականի մարզպանին որևէ հնարով բռնել Տիրանին: Շապուհ Վարազին հաջողվում է ընթրիքի հրավիրել Տիրանին: Սրան հաջորդում է Տիրանին կուրացնելը և Պարսից թագավորի մոտ տանելը:

Մեծ նախարարներից բաղկացած ժողովը պատվիրակություն է ուղարկում Հունաց թագավորի մոտ՝ օգնության խնդրանքով: Կայսրի բանակին հաջողվում է պարսիկներին դուրս վտարել Հայաստանից: Միայն փրկվում է Պարսից արքան, որը Պարսկաստան փախչելով՝ հրամայում է քննել և իմանալ, թե ո՞րտեղից առաջ եկավ այս պատերազմը, և պարզվում է, որ Շապուհ Վարազը այդ խռովությունը հարուցել էր մի ձիու պատճառով: Ուստի մեծ շարշարանների ենթարկելով՝ հաշվեհարդար է լինում Վարազին և պատվիրակներ է ուղարկում կայսրի մոտ՝ հաշտություն կնքելու համար: Նաև բանտից ազատում է Տիրանին, իսկ նրա որդի Արշակին թագավորեցնում Հայոց աշխարհի վրա:

Արշակը ստեղծում է մի հզոր բանակ, որը բազմաթիվ ճակատամարտերում հաղթում է պարսիկներին ու բյուզանդացիներին: Պարսկաստանի նոր թագավորը՝ Շապուհը, երեսուն տարիներ իզուր փորձում է շահել Արշակ թագավորի բարեկամությունը:

Արշակավանի կառուցումից հետո Արշակը որոշում է գնալ-տեսնել Շապուհին: Սա վճուկների խորհրդով իր խորանի կեսի վրա շաղ է տալիս Հայաստանից բերված հող և ջուր: Պարսկական հողի վրայով քայլելիս Արշակն ընդունում է իր հանցանքը և մեղանշում, այնինչ հայկական մասում ըմբոստանում է և խրոխտ կեցվածք ընդունում: Վերջին փորձից հետո Շապուհը Արշակին շղթայակապ ուղարկում է Անհուշ բերդը, ուր պիտի մնար Արշակը մինչև մահ:

Ստորև բերում ենք մեկ այլ աղյուսակ:

Աղյուսակ 2-րդ

1. Ձիերը կուրացման գլխավոր պատճառ:	1. Սկյուֆները կուրացնում էին ստրուկներին, որպեսզի կթեն իրենց զամբիկների կաթը:	1. Արշակի հոր կուրացման պատճառը իր սեփական ձին է դառնում:
2. Ապստամբություն տերերի դեմ:	2. Սկյուֆների ստրուկների որդիները պայքարում են իրենց տերերի դեմ և հաղթում:	2. Արշակը պայքարում է պարսիկների թագավորի դեմ և դուրս գալիս հաղթանակած:
3. Տիրակալների նևագ վարվելակերպ:	3. Ստրուկների որդիները, տեսնելով տերերի մտրակները, վերազտնում են իրենց իսկական էությունը և փախուստի դիմում:	3. Արշակը Պարսից արքայի վրանի տակ քայլելով պարսկական հողի վրա՝ ընդունում է իր հանցավորությունը և զղջում:

Հայկական և սկյութական երկերի միջև գոյություն ունեն բազմաթիվ տարբերություններ՝ Դրանցից կարևորներն են.

- ա) Կուրացման պատճառների բովանդակությունը;
- բ) Սկյութների արշավանքը, նրանց վերադարձը, որոնք հատուկ են իրենց երկրին;
- գ) Գործադրված խորամանկությունների քննվելը;
- դ) Պարտվողների հետագա ճակատագրերը:

Սխալ է այն տեսակետը, թե վերոհիշյալ կույրի որդու բազմաթիվ հայկական տարբերակները ծագել են հեթիթական արձանագրություններից կամ սկյութական լեգենդից: Հայկական տարբերակների վրա չէր կարող ազդեցություն ունենալ նաև մի այլանական տարբերակ: Անտեղյակ հեթիթական արձանագրությունից և հայ բանահյուսական երկերից, որոնք մենք համեմատեցինք այս հոդվածի սկզբում, Ժ. Դյումեզիլը 1978-ին լույս տեսած իր գրքում առաջարկում է երկու վարկած, որոնցից յուրաքանչյուրը կարող է ըստ նրա ճիշտ լինել. 1) Սկյութների և Արշակ Բ-ի վերաբերյալ պատումները տեղայնացված առանձնահատուկ դրսևորումներ են Եվրոպայի հարավ-արևելքում և Ասիայում գոյություն ունեցող բանահյուսական մի սխեմայի: 2) Միջին դարերի ընթացքում այլաների հետ փոխհարաբերություններ ունեցած հայ հեղինակները ազդվել են մի այլանական տարբերակից: Սակայն, ինչպես տեսանք արդեն, հայկական ավանդույթյան մեջ կույրի որդու թեման միայն Արշակի մասին պատմության մեջ չի գտնվում, այլ նաև՝ այլուր: Ասենք, որ այլանական որևէ տարբերակի գոյությունը մեզ անհայտ է: Այս առասպելական թեմայի զանազան տարբերակների առկայությունը հայ պատմական և բանահյուսական երկերում, նրանց համեմատելիության ճոխությունը և զանազանությունը բացառում են մի այդպիսի վարկած:

Եթե հայկական ավանդազրույցի կույրի որդին՝ Արան, մահանում է ճակատամարտում՝ գերիշխող Շամիրամի դեմ պայքարելիս, իսկ մյուս կույրի որդին՝ Արշակը, մահանում է գերիշխան պարսից թագավորի ձեռքով քանտուր՝, ապա հեթիթական ևրկի մեջ կույրի որդին մեռնում է գերիշխան աստծու կողմից, չնայած որ այդ աստվածն իր հայրն է:

19-րդ դարում գրի առնված օտական ավանդություններում մենք տեսնում ենք Հերոդոտոսի հաղորդած տվյալները⁹: Առասպելական նարդական ժողովրդի հերոս Բաթրասի բացակայության ժամանակ միաշքանի հսկայի որդին փորձում է առևանգել նարդերի երիտասարդ աղջիկներին, սակայն հանկարծ հայտնվում է Բաթրասը և կովի բռնվում հսկայի որդու դեմ, որը փախչում է մի թևը կորցրած:

19-րդ դարավերջին գրառված վրացական երեք հեքիաթներում¹⁰ հիշվում է հոր՝ գողացված աչքը հետ վերցնելու գրույցը: Վրացական հերոս Ամիրանը դժվար պայքարի միջոցով հետ է վերցնում հոր գողացված աչքը: Դեռ կույ է տալիս Ամիրանին: Նրան ազատում են իր երկու եղբայրները՝ դևի փոր պատուկով և Ամիրանին այնտեղից դուրս քաշելով:

Նարդական ավանդազրույցներում և վրացական հեքիաթներում հայրը միաշքանի է: Ամիրանի մասին երկը միակն է, ուր կույրի որդին ոչ առևանգում է և ոչ էլ ամուսնանում իր հոր թշնամիներից սերված աղջիկների հետ:

Քուրբական էպոս «Քյորոզլու»¹¹ (կույրի որդի) մեջ հերոսի հայրը Ատրպատականի փաղիշահին ձիու երամակների մատակարարողն է: էպոսում հիշվում է հետևյալ դեպքը: Մի օր Քյորոզլու հայրը իր տիրոջն է ներկայանում ընծայով՝ երկու քուռակ, որ գերբնական ծնունդ ունեն, բայց խեղճ տեսք: Փաղիշահը բարկանալով, կուրացնել է տալիս նրան և, անարգելով, ուղարկում: Հոր որդին՝ Քյորոզլին անվանված, նստում է քուռակներից մեկն ու երթվում լուծել հոր վրեժը: Նա համարում է մի մեծ բանակ, որը կոչվում է խենթերի գորգ: Զորքը տեղավորում է Չամբել լեռան վրա, այնտեղից հարձակվում ու ահարեկում է թուրքերին ու պարսիկներին, փրկագին պահանջում քարավաններից: Քյորոզլին աշուղի կերպարանքով գնում և առևանգում է դեռատի աղջիկներին, մարտնչում է ընդդեմ իրեն հակադրվող փաշաների:

Ամենացայտուն իրադարձությունը, ուր երևում է Քյորոզլու նկարագիրը, տեղի է ունենում Բուր փաշայի հետ կապված տեսարանում: Այս փաշան գալիս է՝ Քյորոզլուն կենդանի վիճակում Մեծ Վեդրին տանելու: Քյորոզլին, ըստ իր սովորության, աշուղի տեսքով մտնում է փաշ-

⁹ Տե՛ս Georges Dumézil, «Les légendes...», Revue de l'Historie des Religions, էջ 56—63:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 50—74, նույնի «Romans de Scythie et d'Alentour»:

¹¹ Քուրբական էպոսի ամենաերկար տարբերակը (344 էջ) տե՛ս Mirra Alexandre Chadzho-ի հանձնարարությամբ և հրատարակված այս վերջինի կողմից 1842-ին «Specimens of Kurroglou, the bandit minstrel of Northern Persia, translated from the persotorkish dialect»: էպոսի տարբերակների ամփոփումը տե՛ս Pertev Nalî Boratov, Kōrogliu destani: rivayetterin tahîllî ve mukayesesi meselesi: destana ait nesr olunmamîş metinler, İq̄-tanbul, 1931:

շայի զորամասը, որտեղ և հրավիրվում է փաշայի վրանը: Հերոսը մերթ ըմբոստ է իրեն պահում, նույնիսկ՝ անպարկեշտ, մերթ էլ՝ հնազանդ ու բարեհաճ: Փաշայի ծառաներից մեկը ձայնից ճանաչում է Քյորոզլուն, դուրս է կանչում փաշային և զգուշացնում: Փաշան դժվարանում է հավատալ՝ ասելով, թե Քյորոզլին չէր համարձակվի գալ իր ոտքը: Մտան ատաշարկում է ստուգել՝ ասելով, երբ Քյորոզլու ներկայութիամբ մեկը հանկարծ ասի, որ նա բանտարկյալ է, Քյորոզլին ձեռքերը կխաշի: Վերադառնալով վրան, փաշան բարձրաձայն գոռում է ասվածի մասին, իսկ Քյորոզլին անմիջապես ոտքի է կանգնում և խաշում է ձեռքերը: Փաշան բռնել է տալիս նրան:

Ստամբուլ ճանապարհովելիս Քյորոզլին խորամանկութուն է բանեցնում՝ ասելով, որ ինքը իսկական Քյորոզլին չէ: Փաշան ազատ է արձակում նրան:

Էպոսի վերջում հերոսը մահանում է Շահ Արասի ուղարկած ծառաների հարվածներից¹²:

Աղյուսակ 3-րդ

Արշակ թագավորի պատմությունը	Քյորոզլի էպոսը
1. Արշակի հայրը մի հրաշալի ձի ուներ ¹³ :	1. Քյորոզլու հայրը երկու հիանալի ձի ուներ:
2. Իբրև նվեր պահանջված ձին Ատրպատականի մարզպանի բարկութիան պատճառն է: Նա կուրացնում է Արշակի հոր աչքերը:	2. Իբրև նվեր առաջարկված ձիերը փաղիշահի բարկութիան պատճառն են: Նա կուրացնում է Քյորոզլու հորը:
3. Կույրի որդի Արշակը կառուցում է Արշակավանը՝ իբրև ապաստան ողջ Հայաստանի անօրենների:	3. Կույրի որդի Քյորոզլին կառուցում է մի ամրոց իր զորքի համար, որը կազմված էր խենթեր կոչվող ավազակներից:
4. Արշակը սիրում է առևանգել կանանց:	4. Քյորոզլին սիրում է առևանգել աղջիկներ և տղաներ:
5. Արշակը շատ ճակատամարտերում հաղթում է պարսից արքային:	5. Քյորոզլին բազում մարտերում հաղթանակում է փաշաներին:
6. Շապուհի վրանի տակ Արշակը երկվորյուն է ապրում:	6. Փաշայի վրանի տակ Քյորոզլին երկակի բնավորություն ունի:
7. Բանտարկվելով Շապուհ պարսից արքայի կողմից՝ Արշակը մահանում է բանտում:	7. Քյորոզլին մահանում է Շահ Արասի ուղարկած ծառաների հարվածների տակ:
8. Ապստամբության ժամանակ ավազանու որոշ անդամներ լքում են Արշակին և ապաստանում այլուր:	8. Քյորոզլու ամենալավ ընկերները լքում են Չամլբելը և ապաստան գտնում այլ երկրներում:

1939-ին Հայկ Պերպերյանը հիմնականում հիմնվելով այս աղյուսակում արտահայտված նմանությունների վրա, ցույց է տվել, որ թուրքական էպոսը սերված է Արշակ թագավորի լեգենդից: 1978-ին Ժորժ Դյումենզիլը հանգում է նույն եզրակացությունների¹⁴:

¹² Փամառ-Քաթիպայի բանաստեղծությունք, Մոսկուա, 1881, էջ 31—37, Քյորոզլին քրիստոնյաների բարեկամն է և ամենուր պաշտպանություն է գտնում նրանց կողմից: Նրա հայասիրությունը արտահայտվել է հետևյալ տողում. «Սիրում եմ ես հայի խաչը»:

¹³ Հստ Մոզեսե ետրենացու (2, 62), Արտաշեսի որդի Տիրանը անձնատուր է լինում որսին ու զբոսանքներին: Նա ուներ երկու հրաշալի, թեթևաշարժ ձի, որոնք այնքան արագընթաց էին, որ, ասես, ոչ թե գետնի վրայով, այլ երկնքով էին թռչում: Բայց այս Տիրանը տարբեր է Արշակի հայր Տիրանից (3, 11):

¹⁴ S. G. Dumézil, Romans de Scythie et d'Alentour,

Սկյութների, Արշակի և Քյորոզլու պատմությունները կազմում են այստեղ ուսումնասիրված առասպելական թեմայի երկրորդ տարրերակը: Այստեղ հայրերի վուրացման պատճառը ձին է: Կույրերի որդիները դավաճանում են իրենց ստրուկի կամ վասալի ծագմանը՝ իրենց իշխողների նենգությունից զրդված:

Վերոհիշյալ համեմատություններից բխում է մի հարց, Կույրի որդիների առասպելական թեման, որ հանդես է գալիս բազմաթիվ ու բազմապիսի տարրերակներով, արդյո՞ք պատկանում է հնդեվրոպական առասպելաբանությանը: Այս հարցին դրական պատասխան տալու համար պետք է վերանան կասկածները վրացական և հեթիթական պատումների ոչ հնդեվրոպական ծագման մասին: Այս ուղղությամբ նշենք հետևյալ ապացույցները: Ք. ծ. ա. 2-րդ հազարամյակում հնդեվրոպական հեթիթական ժողովուրդը գալիս-տեղավորվում է Անատոլիայում: Նրանցից մեզ հասած արձանագրությունները գրված են բնիկ հատտի ժողովրդի հետ հարաբերություններից հետո: Սակայն համեմատական մեթոդը հայտնաբերել է փոթորկի աստծու գոյություն նաև Հնդկաստանում, Հունաստանում և Հռոմում՝ որպես հնդեվրոպական պանթեոնի գրչաձևի աստված: Նույնն է նաև հեթիթական փոթորկի աստվածը, որի մասին խոսեցինք վերևում¹⁵:

Ըստ Բերդ դը Տրիզի¹⁶, աստծու և հերոսի աչքի ու սրտի կորուստը անծանոթ է սեմական առասպելաբանությանը: Բացի այդ, հեթիթական Երկը պարփակում է նաև այլ հնդեվրոպական առասպելական թեմա:

Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս հնդեվրոպական կառույցների մեծ ազդեցություն վրացական ավանդության մեջ¹⁷:

Այսպիսով, սեպագիր արձանագրությունները, Հերոդոտոսի և Բուզանդի երկերում պահպանված տվյալները, 19—20-րդ դդ. գրի առնված ավանդազրույցները¹⁸ հաստատում են նույն առասպելական թեմայի տարրեր տեղափոխությունները և կրած ձևափոխությունները՝ ըստ պատմական և աշխարհագրական պայմանների և զարգացման յուրահատուկ մակարդակների:

3500-ամյա այս առասպելական թեման ընդհանուր ժառանգությունն է ժամանակով ու տարածությամբ իրարից տարբեր բազում ժողովուրդների:

СТЕПАН АГЯН (Париж)—Легендарная тема о слепом отце и его страждующих сыновьях и Кероглы.—Предметом исследования автора статьи стал бродячий сюжет о слепце и его сыне или сыновьях, его проявления и изменения в фольклоре разных народов. Тема прослеживается от «клиннописных надписей, трудов Геродота и Бюзанда до записанных сказаний более позднего времени.

¹⁵ Sê'u, օրինակ, Carol F. Tustus, «Indo-Europeanization of Myth and Syntax in Anatolian Hittite: Dating of Texts as an Index», Journal of Indo-European Studies, 1983, no. 1, 2, էջ 59—104:

¹⁶ Bert de Vries, The stily of hittite epil..., էջ 159:

¹⁷ Georges Charachidzé, La mémoire indo-européenne du Caucase, Փարիզ, 1987: Ըստ Ն. Ազոնցի, վրացական զրույցը հայտնապես կրել է հայկական և թուրքական ազդեցություն: Ամիրան Գարաջանիանին Գերզանի Միհրն է (Հ. Պերպեյան, նշված գիրքը, էջ 30—31):

¹⁸ Բացառությամբ այն տարրերակների, որոնք, ինչպես ցույց է տրված հոդվածում, սերված են վերոհիշյալներից: